

մարդերը հաւատարիմ են իրենց կերած հացին աւելի ընդարձակ չափով մը, քան աւելի բարձր մշակոյթի բարոյախօսական սկզբունքներով ներկուռ ազգերը: Բարի միւսլիմանը խղճի դէմ էր գտեր մէկ տունէն սա զոյգ սպանդը: Ու կը տրամաբանէր, կրտսերը ազատելու համար, հրամանին պակասէն. իրենց հրահանգուածը արմատական բնաջնջումը չէր կեաւորին, այլ սանկ մաքրագործում մը, շուկայի երեսին: Իրաւունք տուին անոր իր ընկերները, արդարութեան զգացումի մը հպատակելով, այն զգացումին, զոր յեղյեղել չեն մոռնար մինչեւ այսօր ալ: Տղան ազատեցաւ: Ըսին, որ երթայ: Չկրցաւ քալել ու ինկաւ կրկին: Փաթթոցաւոր մը, դանակը ակռաներուն մէջ տեղաւորած՝ դրաւ մէկ ոտքը անոր կռնակին, ձեռքովը տղուն կզակը ամուր քաշելով դէպի ինքը, դասական դիրքը ոչխար մորթելուն: Ամէն կեսարացի ի ծնէ մորթել գիտէ, առանց թուրք ըլլալու: Տղուն լեղապատառ ճիչը չզօրեց վայրագ մարդը յուզելու, որ դանակը առած էր միւս ասիին եւ կ'ըսէր թթուած դէմքով մը «Էմելդ^(*) եկած է, օղլում»:

Բայց արդիւնեցաւ միւսներէն: Կը հասնէին ուրիշ խումբեր, նոյն հանդերձանքով, չորս-հինգ հոգիւնոց, իւրաքանչիւրին կեդրոնը մարդ մը, գլխաբաց, դեղին՝ աւելի քան թուղթը, աղերսարկու եւ անորակելի: Այդ խումբերը չէին աճապարեր մորթելու համար: Շուկայէն վերցուած այդ զոհերը կը քչէին դէպի վեր, հայոց թաղերը, տեսանելի տեղեր փնտռելով, իրենց զոհակատարութեան մէջ շատ մըն ալ դերասանութիւն, արուեստի հաճոյքը հետապնդելով կարծես:

Կեսարացին տաղանդով կը մորթէ: Զղայնոտ ու խիստ. Սեդրակին եղբօրը սպաննիչը հրեց տղան, միւս խումբերուն նմանելու ճիգի մը մէջ, բռնի, քաշելով ձեռքէն ու վազցնելով: Ողջ հասցուց զայն իր տունը ու յանձ-

(*) Էմել – Մահուան ժամ: